

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 6/2.3

2013թ. ապրիլի 18-ի թիվ 6 նիստի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ
ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում վճարովի հիմունքներով առկա ուսուցմամբ բոլոր մասնագիտությունների համար վարձավճարի չափ հաստատել 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամը:
2. Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում վճարովի հիմունքներով հեռակա ուսուցմամբ բոլոր մասնագիտությունների համար վարձավճարի չափ հաստատել 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:
3. Երևանի պետական համալսարանի աշխատակից ասպիրանտների համար սահմանել վարձավճարը 50 (հիսուն) տոկոսով զեղչելու իրավունք:
4. Երևանի պետական համալսարանի հայցորդների համար վարձավճարի չափ հաստատել 360.000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Ն. ՄԻՄՈՆՅԱՆ